



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

“ 2 ” փետրվարի 2012թ


№ 10 Ա

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ  
«ՈՐՈՏԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ  
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱԿԱՍՈՂ  
2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 2-Ի N2 ՀՐԱՄԱՆԸ ԱՆՎԱԿԵՐ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետով, 74-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին ենթակետով, <<Հանրակրթության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 31-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի և «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 2-րդ կետի գ/ ենթակետի դրույթներով, հիմք ընդունելով 2012 թվականի հունվարի 9-ին «Որոտանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունում ուսումնասիրության արդյունքներով կազմված արձանագրությունը, **որոշում եմ՝**

1. Անվավեր ճանաչել «Որոտանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի՝ 2011 թվականի հունվարի 2-ի Ա.Սահակյանին աշխատանքի ընդունելու մասին N2 հրամանը՝ ՀՀ ԿԳ նախարարի 2010թվականի օգոստոսի 2-ի <<Հանրակրթական ուսումնական հաստատության ուսուցչի թափուր տեղի համար մրցույթի օրինակելի կարգը հաստատելու և ՀՀ կրթության և գիտության նախարարի 2003թվականի հուլիսի 23-ի N516 Ն/Ք հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին>> N1262-Ն հրամանի պահանջներին հակասելու համար:
2. «Որոտանի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենին՝ ընդունել վերոհիշյալ հրամանը անվավեր ճանաչելու մասին համապատասխան իրավական ակտ:
3. Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին.  
ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ



Ս.ԽԱԶԱՏՐՅԱՆ